Կարգապահական գործ թիվ ԿԳ-23034

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԺԻՐԱՅՐ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանեիլյանի, Գուրգեն Թորոսյանի, Հայկ Սահակյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Ժիրայր Սաֆարյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**,

քննության առնելով փաստաբան Ժիրայր Վազգենի Սաֆարյանի (արտոնագիր՝ թիվ 90), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ գործադիր տնօրեն Աննա Դարբինյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ն 25.09.2020թ. հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արթուր Խաչատուրի Ղափլանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

17.05.2023թ. Պատասխանողի ներկայացուցիչ փաստաբան Ժիրայր Սաֆարյանը գրությամբ (**այսուհետ՝ Գրություն),** դիմել է Հայցվոր ընկերության տնօրենին:

Գրության մեջ փաստաբանը թույլ է տվել որոշ արտահայտություններ, որոնք Դիմողի գնահատմամբ խախտում են փաստաբանի վարքագծի կանոնները: Մասնավորապես, Գրության մեջ Փաստաբանը նշել է հետևյալ արտահայտությունները՝ «***Նմանատիպ պատանեական զեղումները ոչ միայն ծիծաղելի են, այլև պատիվ չեն բերում ոչ Ձեզ, ոչ էլ առանց այն էլ վարկաբեկված «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ին***»:

Դիմողը, վկայակոչելով **«Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածները, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) որոշ կարգավորումները,** նշել է, որ տվյալ դեպքում Փաստաբանն

անմիջական տեղեկություն է փոխանակել կողմի հետ այն դեպքում, երբ նա տեղյակ է, որ Ընկերությունն ունի փաստաբան, և ունեցել է նրա հետ գրագրություն և այլն: Ավելին, ընկերության և իր փաստաբանի միջև անժամկետ կնքված պայմանագիրը դատական գործում առկա է և դրա մասին նշված է նաև հայցադիմումի մեջ:

Դիմողը, վկայակոչելով նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի որոշ կարգավորումներ, նշել է, որ Փաստաբանը թույլ է տվել վարքագծի համապատասխան կանոնների խախտումներ, քանի որ դատավարական մյուս կողմ հանդիսացող ընկերությանն անվանել է «առանց այն էլ վարկաբեկված» ինչը ոչ միայն զուրկ է հարգալից վերաբերմունքից, այլ նաև վիրավորական է, և ամենակարևորը անհիմն է, բացի այդ փաստաբանն ընկերության տնօրենի վերաքննիչ բողոք ներկայացնելու գործողությունն անվանել է «նմանատիպ պատանեական զեղումները ոչ միայն ծիծաղելի են», ինչը նույնպես կոպիտ վիրավորանք է և որևէ աղերս չունի հարգալից վերաբերմունքի հետ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.09.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 25.09.2023թ. Պալատում մուտքագրված գրությամբ ներկայացրել է փաստաբան Ժիրայր Սաֆարյանի 17.05.2023թ. գրության պատճենը, նշված գրությունը ստանալու ծրարի պատճենը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ժիրայր Վազգենի Սաֆարյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Աննա Դարբինյանի դիմումի վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետներում Փաստաբանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.09.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 29.09.2023թ. Պալատում մուտքագրված գրությամբ ներկայացրել է «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի պատճենը, թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդության պատճենը և թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով կայացված վճռի պատճենը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.09.2023թ. թիվ 223-Ա/ԿԳ-23034 որոշմամբ փաստաբան Ժիրայր Սաֆարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 4.1. կետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

08.09.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 07.11.2023թ. կազմել է եզրակացություն:

– Եզրակացությամբ հաստատված են համարվել այն փաստերը, որ թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով «ԳԼԱՁՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում Դիմողը նշել է հետևյալը.

– «Ստացվում է, որ դատարանները հայցադիմում կազմել ներկայացնել, կից փաստաթղթերով դրան ուսումնասիրելու աշխատանքը մի քանի անգամ ավելի քիչ են գնահատում**, քան երկտող միջնորդություն ներկայացնելը**», Փաստաբանը, ստանալով վերաքննիչ բողոքը, Դիմողին հասցեագրված գրություն է ներկայացրել, որտեղ նշել է հետևյալը.

«Հարգելի տիկին Դարբինյան. 11.05.2023 թվականին ստացել ենք թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով Ձեր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը: Խնդրում եմ Ձեզ հետայսու դատավարական փաստաթղթերում զերծ մնալ գործընկերների կատարած աշխատանքի հասցեին հեգնական տոնով արտահայտվելուց:

Վստահեցնում եմ, որ նմանատիպ պատանեկան զեղումները ոչ միայն ծիծաղելի են, այլև պատիվ չեն բերում ոչ Ձեզ, ոչ էլ առանց այն է վարկաբեկված «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ին:

Ինչ վերաբերվում է իմ կողմից ներկայացված **«երկտող միջնորդությանը»,** հավատացնում եմ, որ կարևորը բովանդակությունն է, այլ ոչ թե տողերի քանակը»:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 07.11.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.12.2023թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով «ԳԼԱՁՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում Դիմողը նշել է հետևյալը.

«Ստացվում է, որ դատարանները հայցադիմում կազմել ներկայացնել, կից փաստաթղթերով դրան ուսումնասիրելու աշխատանքը մի քանի անգամ ավելի քիչ են գնահատում**, քան երկտող միջնորդություն ներկայացնելը**»: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի 29.09.2023 թվականի, № 2245-23 մուտքի համարով գրությանը կից*

ներկայացված թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի պատճեով:

– Փաստաբանը, ստանալով վերաքննիչ բողոքը, Դիմողին հասցեագրված գրություն է ներկայացրել, որտեղ նշել է հետևյալը.

«Հարգելի տիկին Դարբինյան. 11.05.2023 թվականին ստացել ենք թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով Ձեր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը: Խնդրում եմ Ձեզ հետայսու դատավարական փաստաթղթերում զերծ մնալ գործընկերների կատարած աշխատանքի հասցեին հեգնական տոնով արտահայտվելուց:

Վստահեցնում եմ, որ նմանատիպ պատանեկան զեղումները ոչ միայն ծիծաղելի են, այլև պատիվ չեն բերում ոչ Ձեզ, ոչ էլ առանց այն է վարկաբեկված «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ին:

Ինչ վերաբերվում է իմ կողմից ներկայացված **«երկտող միջնորդությանը»,** հավատացնում եմ, որ կարևորը բովանդակությունն է, այլ ոչ թե տողերի քանակը»: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի 25.09.2023 թվականի, № 2215-23 մուտքի համարով գրությանը կից ներկայացված Փաստաբանի 2023 թվականի մայիսի 17-ի գրության պատճենով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ժիրայր Սաֆարյանը փաստաբան է հանդիսանում 06.10.2013թ. թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ժիրայր Սաֆարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով դատավարական գործողություններ կատարելու և դրանով պայմանավորված Կանոնագրքի 4.1 կետի կիրառելիության մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Կանոնագրքի 4.1 կետից հետևում է, որ, որ Կանոնագրքի նշյալ կետի խախտման

համար մեղավոր ճանաչվելու համար ենթադրյալ իրավախախտումը պետք է տեղի ունենա դատավարական գործողություն կատարելիս:

Դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոնները գործում են դատավարական գործողություններ կատարելիս, իսկ սույն կետի համատեքստում Փաստաբանը պարտավոր է, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Գործում առկա 2023 թվականի մայիսի 17-ի Գրությունը Փաստաբանի կողմից փոստային ծառայության միջոցով հասցեագրվել է բացառապես դիմողին, հետևաբար, Փաստաբանի կողմից որևէ դատավարական գործողություն չի կատարվել, ուստի անկախ այն հանգամանքից, թե ինչ արտահայտություններ են նշված եղել Գրությամբ, չի կարող դիտարկվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում:

Անդրադառնալով Կանոնագրքի 2.2.2 ենթակետով սահմանված կանոնի խախտմանը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի և Պալատի կանոնադրության իրավադրույթներին: Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքի պարզումն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի և, մասնավորապես, դրա 2.2.2 ենթակետի շրջանակներում Պատասխանողի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի նշված ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը:

Կարգապահական գործի նյութերով և կողմերի բացատրություններով Հանձնաժողովը հաստատված է համարում, որ թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով «ԳԼԱՁՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում Դիմողը նշել է հետևյալը.

«Ստացվում է, որ դատարանները հայցադիմում կազմել ներկայացնել, կից փաստաթղթերով դրան ուսումնասիրելու աշխատանքը մի քանի անգամ ավելի քիչ են գնահատում**, քան երկտող միջնորդություն ներկայացնելը**»:

Փաստաբանը, ստանալով վերաքննիչ բողոքը, Դիմողին հասցեագրել է գրություն, որտեղ նշել է հետևյալը.

«Հարգելի տիկին Դարբինյան.

11.05.2023 թվականին ստացել ենք թիվ ԵԴ/28311/02/20 քաղաքացիական գործով Ձեր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը: Խնդրում եմ Ձեզ հետայսու դատավարական փաստաթղթերում զերծ մնալ գործընկերների կատարած աշխատանքի հասցեին հեգնական տոնով արտահայտվելուց:

Վստահեցնում եմ, որ նմանատիպ պատանեկան զեղումները ոչ միայն ծիծաղելի են, այլև պատիվ չեն բերում ոչ Ձեզ, ոչ էլ առանց այն է վարկաբեկված «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ին:

Ինչ վերաբերվում է իմ կողմից ներկայացված **«երկտող միջնորդությանը»,** հավատացնում եմ, որ կարևորը բովանդակությունն է, այլ ոչ թե տողերի քանակը»:

Սույն կարգապահական վարույթի շրջանակում փաստաբանին վերագրվող արարքը, այն է՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում դրսևորած վարքագիծը պետք է կասկածի տակ դնի կամ խաթարի փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը, իսկ տվյալ դեպքում Փաստաբանի քննարկվող գործողություններն ըստ էության հանդիսանում են մասնավոր բնույթի բանավեճ, քան մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական գործունեություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը թույլ չի տվել այնպիսի վարքագիծ, որով ստեղծված իրավիճակում կարող էր կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ժիրայր Վազգենի Սաֆարյանի (արտոնագիր՝ թիվ 90) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23034 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23034-2-Ա
07 դեկտեմբերի 2023թ.
ք. Երևան